

ՀԱՅ ԴԿՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՍԻՐԱԳԻՈՍԻ ՄԷՋ

Սիրազիւսի Ս. Գօղոս Հայց. Եկեղեցւոյ Հայ Դպրոցի կազմակերպած ՈԼՍՈԼԳՆԱԳ Համազումարը տեղի ունեցաւ եկեղեցւոյ սրահին մէջ՝ Դեկտեմբեր 6ին եւ 7ին: Համազումարի գլխաւոր նիւթն էր ``Հայերէն Լեզուի ՈԼՍՈԼԳՄԱՆ Արդիական Մեթոտը``, եւ որուն ներկայ էին Սիրազիւսի, Գինկհամթընի եւ Ռոչեսթըրի Հայ Դպրոցներու ուսուցիչները, ծխական Խորհուրդներու անդամներ եւ Հայ Դպրոցով հետաքրքրուող ազգայիններ: Երկօրեայ այս համազումարի յայտագրին գլխաւոր խօսքըն էր Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի Հայ Դպրոցներու Կրթական Բաժանմունքի Տնօրէն Օր. Սիլվա Տէր Ստեփանեան:

Ամբողջ յայտագրի արդիւնքը սքանչելի էր: Ուրբաթ երեկոյ, Օր. Սիլվա Տէր Ստեփանեան հանդիպում ունեցաւ մօտ 45 աշակերտներու եւ 20է աւելի ուսուցիչներու, ծխական Խորհուրդներու անդամներու եւ ծնողներու հետ: Քանի մը վայրկեանի ընթացքին արդէն իսկ Օր. Տէր Ստեփանեան երիտասարդ ունկնդիրները զրաւած էր, եւ ինչ որ ամենէն կարեւորն է, ան հաստատած էր մտերմիկ յարաբերութիւն մը իր եւ աշակերտներուն միջեւ: Այս պահը շատ օգտակար եւ հետաքրքրական էր ուսուցիչներուն համար, որոնք սկանառես կ'ըլլային թէ Օր. Տէր Ստեփանեանի դասաւանդութեան մեթոտին եւ թէ՛ աշակերտներուն կողմէ ցոյց տրուած ուշադրութեան եւ հետաքրքրութեան:

Շաբաթ օրուան յայտագիրը նուիրուած էր ուսուցման օժանդակող նիւթերու պատրաստութեան: Օր. Տէր Ստեփանեանի կողմէ պատրաստուած մոխ նիւթերը օրինակ ունենալով՝ ներկաները անոր հսկողութեան ներքեւ տեղւոյն վրայ պատրաստեցին զանազան

նիւթեր, ծանօթանալով նաեւ անոնց գործածութեան ձեւերուն: Ամէն մէկը նիւթ մը պատրաստելու համար գործի լծուած էր՝ նոյնիսկ ծխական Խորհուրդի ատենապետ Տիար Մանուկ Միքայէլեանը: Համազումարի ընթացքին խորհրդակցութեան նիւթ եղան զանազան

կրթական-դաստիարակչական հարցեր, որոնց մէջէն ամենէն նշանակալիցն էր՝ թէ պայ-
ման չէ Հայերէն լեզուի մասնագէտներ ըլլալ՝ մեր փոքրիկներուն Հայերէն լեզու
ուսուցանելու համար, եւ թէ այն հայ ուսուցիչը որ իր դասաւանդելիք նիւթը լա-
ւերպով պատրաստած է եւ աշակերտներուն հետ հաղորդակցելու միջոցը գիտէ եւ իւրա-
քանչիւր աշակերտին հանդէպ ցոյց կու տայ անձնական հոգածութիւն՝ ոչ միայն օգտ-
տակար կը հանդիսանայ իր աշակերտներուն, այլ նաեւ ամբողջ համայնքին: Սիրա-
գիւսի փորձը ցոյց տուաւ որ եթէ պատասխանատու առաջնորդները կրնան օգտակար եւ
հետաքրքրական յայտագիրներ պատրաստել՝ համայնքին փոխադարձ հետաքրքրութիւնն ու
մասնակցութիւնը արդէն իսկ ապահոված կ'ըլլան:

Համագումարը վերջացաւ ծաշկերոյթով մը եւ երկու օրերուն ընթացքին գործա-
դրուած յայտագրի վերաոեսութեամբ: Ներկաները միաձայնութեամբ ընդունեցան որ
հայ ամերիկածին սերունդին Հայերէն լեզու սորվեցնելու առնչութեամբ Օր. Սիլվա
Տէր Ստեփանեանի յայտնած գաղափարները մեծապէս պզղած էին իրենց տեսակէտներուն
վրայ: Ի դէպ, համագումարի մասնակիցները կը յանձնարարեն որ որեւէ հայ համայնք
եթէ կը փափաքի լուրջ քայլեր առնել մեր փոքրիկներուն (չորս տարեկան եւ վեր)
Հայերէն սորվեցնելու համար՝ պարտի կազմակերպել Հայ Ուսուցչաց Համագումար Օր.
Սիլվա Տէր Ստեփանեանի օժանդակութեամբ եւ մասնակցութեամբ: Նաեւ, Առաջնորդարա-
նի Հայ Դպրոցներու Կրթական Բաժանմունքը այն միակ վայրն է՝ ուր կարելի է դի-
մել ծանօթանալու համար լեզուի ուսուցման արդիական մեթոտներուն եւ ունենալ
ուսուցման օժանդակող բազմապիսի առարկաներ եւ նիւթեր:

Մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնենք Ս. Պօղոս Եկեղեցւոյ Հայ Դպրոցի
տեսչուհի Տիկ. Արա Ճգնաւորեանի՝ որ այս համագումարի յաջողութեան համար ան-
հրաժեշտ կարգադրութիւնները ըրած էր, եւ Տիկ. Սարգիս Խանգառեանի՝ որ պատաս-
խանատուն էր հիւրասիրութեան եւ ծաշկերոյթին:

ԱՐԱ Ա. ՃԳՆԱՎՈՐԵԱՆ